ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Դավրէժ, 23 օգոստոսի

«Մշակի» 131 համարում պ. Արմենակը հաղորդել էր, որ Դավրէժի երկու արական և երկու իգական դպրոցների հարցաքննութիւնները վերջացան առանց որ և իցէ յառաջադիմութիւն ցոյց տային։ Պ. Արմենակի հաղորդած տեղեկութիւնները, որքան վերաբերում է Լիրմայ թաղի երկսեռ դպրոցներին, պէտք է սխալ տեղեկութիւններ համարել։ Նորին սրբազնութիւն Մուշեղեանց Գրիգոր արքեպիսկոպոսը իւրաքանչիւր առարկայի քննութիւնն ներկայ է եղել և ամէն անգամ օրշնութից հեռացկալութիւն է յայտնել դպրոցի գործողներին աշակերտների յառաջադիմութեան համար։ Նոյնպէս և հարցաքննութեան ներկայ գտնվող բոլոր հասարակութիւնը գոհ մնաց։ Ուստի ճշմարտութիւնը վերականգնելու համար պէտք է հրապարակ խոստովանել որ պ. Արմենակը Լիրմայ թաղի երկսեռ դպրոցների քննութիւնների ոչ մէկին ներկայ չէ եղել և չէ տեսել, և հետևապէս սխալ են իր տուած տեղեկութիւնները։

Ց. Ն. Օրբէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Новое Время» լսել է որ մի քանի քաղաքներ կառավարութիւնը խնդրել են տուել, որ անշարժ և շարժական կայքեր ապաշխարելու ժամանակ, ապաշխարեանց գնաստութիւնը կատարվէր պատգամաւորների հանձնաժողովներ, որոնք ընտրված կը լինեն քաղաքի հասարակութիւնից։

—

«Голосъ» լրագիրը իր մի բանաստեղծի մէջ, որ տարագրված է Պրազովիի անունով, նկարագրում է ռուսաց վանքերից մէնը Սոլովէցկի վանքը և ծանօթացնում է մեզ այն մարդիկների դրութեան հետ, որոնք մինչև այսօր կրօնական ազատ կարծիքների պատճառով տանջվում են իւրանց ամբողջ կեանքը վանքի բանտերի մէջ, հետևելով նոյն երի անուանով։ Յօդուածագիրը հարկաւոր է համարում վերջապէս կրօնի և խղճի կատարեալ ազատութիւնը։

—

Զորեքշաբթի օր կարդացանք «Մշակի» միայն էկս թերթը դուրս բերելու հետևեալ նոր էինք անցել Դաւիթեանց եղբայրների տպարանը։ Այժմ «Մշակը» տպվում է նոր տառերով։

—

«Մշակի» բաժանորդների թիւը հետզհետէ աւելանում է։ Այժմ ունենք 1010 բաժանորդ և բացի սրանից օրական ծախսում է թիֆլիսում առանձին համարներով մօտ 60 նուսխը։ Այսպիսով «Մշակը» ունի այժմ ընդամենը 1070 բաժանորդ։ Զրիպարտ ուղարկվող համարները չենք հաշուում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱՍ ԶԷՐԱՊԻ ՃԱՌԸ

—

Մեզ ուղարկեցին Մշնաս Զէրապի ճառի թարգմանութիւնը, որ նա կարդացել է Անգլիայում, Կորդէնի կլուբի մէջ։ Ահա տպում ենք այդ ճառը։

«Տեսարք. ներեցէք ինձ արտայայտել իմ շնորհակալութիւնս այս ամենապատուաւոր ակուտիրին (կլուբ) որ, զիս հրաւիրելով այս շքեղ ժողովին, ուզեց պատուել յանձն իմ հայ ժողովուրդս, որում կը պատկանիմ։ Ձգշմարտապէս լսուած է թէ Թիլպարա Կորդէնի պէս մարդիկ չեն պատկաներ միայն այն ցեղին որ զիրենք ծնաւ, բոլոր մարդկութիւնն իրաւունք ունի անունդիմ պարծենալու։ (Ծափահարութիւնք)։ Հետևապէս, շատ բնական է որ մի հայ թարգման կանգնի իր հայրենակցաց դգացումներուն միջազգային այս խնդրի մէջ։ Տեսարք, հայ ազգը, Ասիոյ մէկ անկեան մէջ կորուսած և վայրի ցեղերէ շրջապատուած, սկսաւ, սակայն իւրացունել եւրոպական քաղաքակրթութիւնը։ Մի ազգ որ կարող է կարդալ իր յատուկ լեզուով Հոմէր, Կիկերոն, Նէյքսպիր և Դանտէ, Նիլլէր և Վիքտոր Հիւգո, չը կարնար ծնել անտարբեր այն մեծ սկզբանց որք այսօր կը մղեն զեւրոպան դէպի նոր Տորիզոններ։ (Ծափահարութիւնք)։ Ձեր փաստաբանած սկզբունքը զոր ասիական պերճօրէն կը բացատրէր աշխարհի առջև հռչակաւոր այն մարդն, որուն անունը կը կրէ այս կամարը, և զոր Անգլիա, ամէն տեսակ ազատութեանց այս կարապետը, առաջինն եղաւ ի գործ դնելու, օրինակ է թէ ի մասին իւրաքանչիւրին հեռանանց և թէ ի մասին բարոյական արդեանց, որովհետև, ոչ միայն ազատութիւնը համար դիւրամատչելի կընէ ամէն բերքերը, այլ և նաև, ամենքին շահերն իրարու կապելով, կը տանջնէ նոր եղբայրութիւն մը ժողովրդոց միջև, և մրցմամբ այս յառաջադիմութիւնը անխուսափելի հարկ մը կընէ իւրաքանչիւր ազգի համար։ (Ծափահարութիւնք)։ Տարակոյս չունիմ, Տեարք, թէ մի օր աշխարհ համաձայն ձեր այդ գաղափարին պիտի գտանայ։ Այդ է առարկայն—մեծ և վսեմ առարկայն—որում գուք կը հետամտիք։ Բայց ներեցէք ինձ ըսել ձեզ, թէ այդ օրը չը կարնար ծագել մի ուրիշ սկզբունքի մը յաղթութիւնէն յառաջ,—այն է ազգաց արդարութիւնը։ (Ծափահարութիւնք)։ Երբ Եւրոպայի մէջ վաճառականութեան ազատութեան խնդիրը վէճի ներքև է, գուք որ զայն կը պաշպանիք, և որ կը ջանաք անոր ընդհանրական գործադրութիւն մը տալ, պէտք չէ որ մոռանաք թէ Ասիայի մէջ կը գտնուի ժողովուրդ մը որ տարաբնակ արտաքին ազատութիւն չունի, և բնութենէն մնանաւոր կերպիւ նպաստաւորեալ երկրի մը մէջ որ խանձարքն եղած է Տնտեսարեղ և զորձուենաց ազգաց, հարստահարութիւնք կը գտատպարտեն արտադրողն ի կրծանումն և սպառողն ի սով։ Գուք այժմ կը խնդրիք և կը հռչակիք խաղաղութիւն, և իրաւունք ունիք, զի պատերազմը մարդկութեան համար թշուառութեանց մեծագոյնն է, և, ինչպէս այլուր ըսած եմ, մարդոց մի հաւաքական նախապիտիք է Աստուծոյ դէմ Սատանայն, Տեարք, որ-սանք ժամանակ որ պիտի գտնուի ժողովուրդ մը, ընդունակ յառաջադիմութեան և քաղաքակրթութեան, բարբարոսի մը բռնութեան տակ, որ չը գիտէր, որ չուզեց երբէք գիտնալ թէ ինքզինքն ինչպէս կրթելու է, խաղաղութիւնը միմիայն կեղծիք (chimere) մը կարող է լինել, և ոճիր մը ընդդէմ մարդկութեան։ (Լսեցէք, լսեցէք) Տեարք, գուք կը հասկանաք այս ճշմարտութիւնները։ Ձեր սկզբունքը կը մղէ զձեզ անդիմադրելի կերպիւ դէպի այս արդիւնքը։ Եւ գուք վստահութիւն ունիք այն հայակաղ անձին վրա որ ձեր փաստաբար հայրենեաց բաղդին կը նախագահէ։ Թոյլ տուէք ինձ յաւելուլ այստեղ թէ Արիւղէի մէջ, նորա պաշտպանութեան լուրն ամենամեծ ցնծութեամբ ողջունուեցաւ բոլորն այն տեղերն ուր սիրտերը կը բաբախեն ազատութեան համար։ (Ծափահարութիւնք)։

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Голосъ լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Երզրումից օգոստոսի 20-ից։

Ռուսների յիշատակը այստեղ անջնջելի է։ Հաղուստներու տան մէջ չը կայ մի ռուս օֆիցերի յիշատակը։ Իւրաքանչիւր օֆիցերը թողել է ի յիշատակ մի խաչ, պատկեր կամ իր լուսանկարը։ Ռուս օֆիցերները, բացի այդ ընծաներից, աւելի լաւ չէին կարող ներկայանալ։ Լինել այն հիւրասիրութեան համար, որ հայերը արել են նրանց։

Այն տան տէրը, որի մօտ ես իջել էի, ուներ երկիրը առաջնորդող մանաժողովի նախագահ, թժիշկ Բէյ-յաղիզերի պատկերը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի սրբութեամբ էր պահվում ռուս թժշկի յիշատակը։ պատկերը հարուստ, ծաղիկներով և պսակներով զարդարված ոսկէ շրջանակի մէջ էր դրված։ Տեղացի հայերը չափազանց երախտագէտ էին նրա եռանդուն պատերազմելու համար տարտղնվող հիւանդների դէմ, որոնք սպառնում էին սարսափելի կերպով տարածվելու։

Քանի որ ռուսները Երզրումի մէջ էին, հարերը մինչև վերջին ոսկէ չէին հաւատում որ նրանք կերթային։ Այդ պատճառով հայերը շատ քիչ էին հոգում թիւրքերի հետ նախկին յարաբերութիւնները պատրաստելու մասին։ Երբ հայերի յոյսերը անդիմադրաբար խարվեցան, նրանք պատրաստվեցան ամէն տեսակ ընդդիմադրութիւն ցոյց տալ թիւրքերի բռնութիւններին։ Թիւրքերին խրատելու համար հայերը վճռեցին նրանց և ոչ մի յանցանքը անպատիժ չը թողնել։

Օրերում մի թիւրք սատիճանաւոր, անցնելով հիով մի փողոցով, ընկաւ ձիուց, որ վախեցել էր մի հայ երիտասարդի յանկարծակի երևալուց։ Երբ բարկացած սատիճանաւորը մարտակ բարձրացնում է հայ երիտասարդի վրա, այս վերջինը հանում է լըցրած ռիվոլվէրը, ուղղում է թիւրքի վրա, սպառնալով խլոյն նրան սպանել։ Թիւրքը պահում է մարտակը, նստում է ձիու վրա և հեռանում է, ասելով. «Հայ գիտի զամանն»։

Տեսնելով հայերի այդպիսի որամադրութիւնը, թիւրքերը շուտով հանգստացան։ Դեռ մինչև այժմ հայերը անդադար կրկնում են թիւրքերին թէ հենց որ կը կրկնվեն առաջվայ անկարգութիւնները, նրանք խլոյն կը հրաւիրեն ռուսներին Երզրումը վերջնականապէս գրաւելու համար։ Թիւրքերը այնպէս ձեռնչված են Ռուսաստանի պատերազմական ազդեցութեամբ, որ մինչև այժմ հաւատում են այդպիսի սպառնալիքներին։

Առհասարակ Երզրումի վիլայեթի հայերը սառը և հրաձիգ զէնքի բաւական մեծ պաշար ունեն։ Այդ պատճառով նրանց յարաբերութիւնները թիւրքերի հետ այժմ բոլորովին փոխվել են։ Ինձ ասացին, որ հայերը զենաւորված ընկերութիւններ են կազմակերպել, որոնք ուշադրութեամբ հետևում են անջրքերի զարգանալուն, որպէս զի հարկաւոր դէպքում իրանց օգնութիւնը աւելի իրական և օգտաւէտ դարձնեն։ Հաստատում են, որ Թիւրքաց կառավարութեանը յայտնի է այդ ընկերութիւնների գոյութիւնը, բայց նա ոչինչ չէ կարող անել։ Նա միշտ մի պատասխան է տալիս, որ այդ բոլորը անվում է սեփական ապահովութեան համար թիւրքերից և քիւրդերից։

Այստեղ շատ են խօսում Հայաստանին շուտով արվելի ինքնավարութեան մասին և աւելացնում են, որ եղիպտական առաջին մինիստր Նուբար-փաշա, իբրև հայ, երկրի անփոխոխ կառավարիչ կը նշանակվի։ Եթէ այդ ենթադրութիւնը նրա հետևանք է, որ Նուբար-փաշա Նորերումն մեծ փոքր նուիրեց Հայաստանի սովորներին։ Պատուաւոր ծերունիները ասում են, որ Նուբարի, կամ մի այլ փաշայի նշանակելը հայերին չի բաւականացնիլ։ Ահա ինչ ասաս ինձ ծերունիներից մէկը այդ լուրի առիթով. «Ոչ, Նուբար փաշա թէպէտ լաւ մարդ է, բայց նա էլ ֆէս կրողներից է, իսկ թիւրքաց ֆեսերը մեզ բաւական ձանձրացրել են։ Եթէ հարկաւոր կը լինի անփոխոխ կառավարիչ ունենալ աւելի լաւ է մենք յաւաքգիմանան մի քայլ կանենք և մեր «ժամանակաւոր» կառավարիչ ահա ինչպիսի մարդ կընտրենք»։ Այս ասելով ծերունին մէկնեց իր ձեռքը դէպի հիւսիս և ամենքը նրան հասկացան։ Ծերունին ակնարկում էր այն երեսելի մարդուն, որ երկու տարի առաջ յաղթում էր Հայաստանի մէջ, իսկ այժմ աջողացնում է Ռուսաստանի խաղաղ առաջնորդութիւնը։ Այդ մարդու անունը այստեղ դիւթական ազդեցութիւն ունի։

Այստեղի անգլիական հիւպատոս պ. Տրոտտեր Նորերումն ուղեւորվեցաւ Վան, որտեղ ինչպէս ասում են, անհանգստացնող գործեր են պատրաստվում։ Որովհետև այդ ճանապարհորդութիւնը կապված է անձնական վտանգի հետ, այստեղի ռուսական հիւպատոսը չը հետևեց Տրոտտերի օրինակին։ Վանի հիւպատոս Պէյլոյանի առաջին զեկուցումները ստանալուց յետոյ, պ. Տրոտտեր անյապաղ նստեց ձիու վրա և թիւրք սուվարիների ուղեկցութեամբ ուղևորվեցաւ Վան։

Դարսի նահանգից այս կողմը գաղթող թիւրքերը գրեթէ բոլորն էլ ուղեւորվում են հեռաւոր Արևելք, դէպի Դամասկ։ Հայերը ի Տարկէ գրանից հիացած են և գաղթողների ճանապարհը օրհնում են։

Ֆրանսիական նոր հիւպատոս պ. Լաֆլոսա հասաւ այստեղ։ Նրա մասին դեռ ոչինչ չէ կարելի ասել։ որովհետև նա դեռ ոչինչով մէջ չէ խառնվել։ Բայց սկզբնական տպաւորութիւնների հանմեմատ ամենքը ասում են, որ նա մոլեռանդ կաթոլիկ չէ, ինչպէս ֆրանսիական նախկին հիւպատոս Ծիլլերը և որ նա ազատամիտ մարդ է։ Քաղաք մտնելու ժամանակ նա հանդիսով ընդունվեց հայ երիտասարդութենից, որին նա ասաց, թէ ինքը եկել է պաշտպանելու «ոչ թէ կրօնական սկզբունքները, այլ ազգային իրաւունքները»։

Նորերումն ես ներկայ էի հայերի ազգային մեծ ոտնին, որ իւրաքանչիւր տարի կատարվում է Թաշտպայա լեռան վրա։ Այդ լեռան վրա սկիզբ է առնում Եփրատ գետը, որ պտտվորում է Հայաստանի աշխարհն տարածութիւնը։ Այդ պատճառով այդ գետի սկիզբը կրօնական կուլտ է կազմում։ Աւանդութիւնը ասում է, որ այդ լեռան մէջ թաղված էր կռապաշտներից հալածված խաչը, որի վրա Փրկիչը խաչված էր և, երբ կռապաշտները փորում էին հողը քրիստոնէական սրբութիւնը ձեռք բերելու և պըղծելու նպատակով, փորված տեղից յանկարծ ջուր բղխեց և բոլորին խեղտեց իր հեղեղներովն։ Ահա այդ հեղեղները սկիզբ տուին Եփրատ գետին, որ մինչև այժմ էլ իր այժիզը նրանցից է սառնում։

6,700 ֆուտ բարձրութեան վրա աչքս առաջ բացվեցաւ փոքրիկ բլուրներով շրջապատած մի տափարակ։ Որովհետև տափարակից զանազան ուղղութիւններով սկիզբ են առնում շատ գետեր՝ Տիգրիս, Եփրատ, Արաքս և Զօրօղս, այդ պատճառով երկրի աւանդութիւնը ասում է, որ այդտեղ է եղել բերիական եդեմը։ Պատմում են, որ մի ֆրանսիացի մի քանի տարի առաջ ուղեւորվեցաւ Հայաստան միայն այն նպատակով, որ անձամբ տեսնի Ադամի կաղամաձորները, բայց զարմացաւ չը գտնելով այդտեղ բերիական բոյսերի Ինձ մինչև անգամ ցոյց տուին այն թարգմանչին որ օգնում էր իր ձեռնարկութեան համար ահագին փոքր ծախսով ֆրանսիացուն։

Այստեղի հայաշխարները չափազանց զեղեցիկ են։ Նրանք բաց երեսով են մեզ դալիս և հանդում են ինքնուրոյն, ազգային հագուստ, որի յատկանիշն է կազմում կարմիր, կամ մորու գոյնի, ոսկէ զարդերով կարված զոգնոցը։ Գիսի զարդարանքը շատ հարուստ և զեղեցիկ է։ Սեռահերները շատ քիչ են, մեծ մասամբ այստեղի հայուհիները շէկահերներ են, մեծ և կապոյտ աչքերով։

Խմբագիր—հրատարակող ԳՈՒԳՈՒՐ ԱՐԾՐՈՒՆԻ